

**ԴԵՐՍԻՄԻ ՀԱՅՈՑ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԻՄՆԱՄԽԴԻՐՆԵՐԻ
ՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
/պատմազգագրական ակնարկ/**

Ա. Ա. ՊՈՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Արևմտյան Հայաստանի գորգագործական մշակույթի մասին մեր պատկերացումները համեմատաբար մակերեսային ու կցկտուր են: Հայոց գորգագործական մշակույթի երբեմնի հանրահայտ կենտրոնների մասին չկան առանձին ուսումնասիրություններ ու մասնավանդ՝ ազգագրական նյութեր: Այս առումով կարելի է բացառություն համարել պատմական Ներքին Հայքի մի մասը կազմող Դերսիմը, ուր 19-րդ դ. վերջին ու 20-րդ դ. սկզբներին տեղագրական ուսումնասիրություններ են կատարել Անդրանիկն ու Գևորգ Հալաջյանը: Դերսիմը ներառում է պատմական Բարձր Հայքի ու Ծոփքի Դարանաղի, Մնձուր, Մանանաղի, Դերջան, Հաշտյանք, Խորձյան, Պաղնատուն գավառները, որոնցից յուրաքանչյուրը եղել է առանձին նախարարություն ու բնակչության գերակշիռ մասն էլ կազմել էին հայերը¹: Նիկողայոս Ադոնցի կարծիքով «Դերսիմ» անվանումը հենց Դերջանի արաբա-պարսկական ձևն է²: Անդրանիկը տարածաշրջանի կազմի մասին հայտնում է, որ այն բաղկացած է երկու մասից՝ դաշտային Չարսանջակից ու Դերջանից և լեռնային՝ մինչ Ակնա սահմանները հասնող դրանց միջանկյալ մաս-տարածքներից³: Դերսիմի մասին այդ նույն նկարագիրն է մատնանշում նաև Գ. Հալաջյանը, շեշտելով, որ այն ընդգրկում էր Չարսանջակի, Բոլոմորի, Խոզաթի, Չմշկաձագի և Ակնա գավառները, ընդ որում այս վերջինիս կազմում նա նկատի ունի միայն Եփրատի աջ ափում եղած գյուղերը⁴: Ամեն դեպքում, մենք, սույն ուսումնասիրությունը շարադրելուց, նկատի ենք ունենալու Ակնից Բոլոմոր ու Կամախից Չմշկաձագ և Բալու ձգվող տարածքները, որի կենտրոնական մասը պաշտոնական Թուրքիան 1936 թ. Դերսիմի փոխարեն վերանվանել է Թունջելի⁵:

Տարածաշրջանի ժողովրդագրական զարգացումների նկարագրի մասին: Այս տարածաշրջանի գորգագործական մշակույթի ուսումնասիրման, մասնավորապես հայոց բնորոշ ավանդույթների բացահայտման հարցում առանց-

¹ **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984, էջ 94, 205-206, 217-218:

² **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում /ռուսերենից թարգմ. Ա. Խոնդկարյան և Է. Խոնդկարյան/, Եր., 1987, էջ 71:

³ **Անդրանիկ**, Տերսիմ, ճանապարհորդություն եւ տեղագրություն, մասն 1, 2, Թիֆլիս, 1900, էջ 128:

⁴ **Գ. Հալաջյան**, Դերսիմի հայերի ազգագրությունը.- ՀԱԲ, թիվ 5, Եր., 1973:

⁵ Այս մասին տես՝ **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 32:

քային նշանակություն ունեն այստեղ կատարված ժողովրդագրական գործընթացների ու դրանց հետևանքների մասին թեկուզ և ընդհանրացված պատկերացում կազմելը: Քննության առարկա են տարաբնույթ քրդական ցեղերի ծագումնաբանական ու էթնիկական պատկանելիության հետ կապված հարցերը: Մասնավորապես դա վերաբերում է կրոնական արարողությունները թուրքերենով կատարող, թուրքական անուններ կրող, բայց առօրյա կյանքում քրդերեն կամ զազայերեն խոսող ալևի աշիրեթներին, որոնց հանդեպ աճող հետաքրքրությունները որոշակի անհանգստություն են պատճառում քրդական ու թուրքական շրջաններում: Թուրք քրդագետները փորձում են ապացուցել, որ քրդերենն ու զազայերենը իրականում թուրքական լեզուներ են, իսկ քուրդ քրդագետներն էլ ջանում են հաստատել դրանց իրանական ակունքներ ունենալու փաստը⁶:

Սակայն այս տարածաշրջանը հայոց պատմության ու պատմանշակութային կյանքում ունեւ առանձնակի նշանակություն: Դրա վկայությունն է հենց միայն այն, որ այդտեղ էին գտնվում հայոց նախաքրիստոնեական հավատալիքների խոշորագույն սրբատեղիները՝ Արամազդի, Անահիտի, Միհրի, Վանատուրի տաճարները⁷: Նույնիսկ մեր ժամանակներում այդտեղ դեռևս պահպանվում են հայոց 107 եկեղեցի ու վանք⁸: Այստեղ աշխարհաքաղաքական իրավիճակը սկսում է փոփոխվել Զուստինիանոս 1-ինի ժամանակներից՝ երբ տարածաշրջանը Մեծ Զայքի մի շարք նահանգների հետ միասին ընկնում է Բյուզանդիայի ազդեցության ոլորտն ու ենթարկվում վարչաքաղաքական լուրջ փոփոխությունների: Ամեն դեպքում, նախքան Մեծ եղեռնը Դերսիմի բնակչության հիմնական զանգվածը, քրդերից հետո, դեռևս կազմում էին հայերը: Նիկողայոս Ադոնցն իր «Յայկական հարցի լուծման շուրջ» աշխատության մեջ անդրադառնալով Դերսիմի պատմաաշխարհագրական հարցերին ու ժողովրդագրությանը, ներկայացրել է 20-րդ դարի սկզբներին Դերսիմի հայերի թվաքանակի մասին մի շարք տվյալներ, այդ թվում՝ իր հաշվարկների համաձայն՝ շուրջ հարյուր հազար հայ, ըստ Լինչի՝ ութսունհինգ հազար⁹: Գևորգ Զալաջյանի հաշվարկներով էլ այդտեղ ապրում էր 110386 հայ¹⁰: Սակայն Դերսիմի գորգագործական մշակույթի ուսումնասիրման առումով շատ կարևոր է Դերսիմի քրդերի ծագումնաբանության հարցի պարզաբանումը. տեղի քրդական աշիրեթները տարբերակվում են դավանաբանական ու լեզվաբարբառային հատկանիշներով, որոնք շատ դեպքերում որոշակիորեն աղերսվում են հայոց պատմամշակութային համալիրների հետ:

⁶ Այլե Զյուր, Դերսիմը, Զայկազը և Պետրոսի պատմությունը, տես՝ http://www.radikal.com.tr/ek_haber.php?ek=r2&haberno=7452

⁷ Տես՝ Ղևոնդ Ալիշան, Զայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 133, 138, 147, 152, Կ. Մելիք - Փաշայան, Անահիտ աստվածուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 108, Կ. Զ. Բդոյան, Զայ ազգագրություն, համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 214 – 232, Թ. Զակոբյան, նշվ. աշխ., էջ 205-206, 217-218, Վերա Սահակյան, <http://nairiland.com/?tag>:

⁸ Վերա Սահակյան, <http://nairiland.com/?tag>: Դերսիմի հայոց եկեղեցիների և այլ կառույցների մասին տես՝ Գ. Զալաջյան, նշվ. աշխ., էջ 19-30:

⁹ Նիկողայոս Ադոնց, Զայկական հարցի լուծման շուրջ, Եր., 1989, էջ 20 – 21, <http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html> /հետայսու՝ Նիկողայոս Ադոնց <http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html/>,

¹⁰ Գ. Զալաջյան, նշվ. աշխ., էջ 100:

Այս առումով, մասնագետներն առանձին հետաքրքրություն են դրսևորել թուրքերի կողմից «**ղզլբաշ**», իսկ հայերի կողմից էլ «**դուզիկ**» անվանված, դավանանքով ու լեզվով առանձնահատուկ, մոտ հարյուր հազար բնակչություն ունեցող ազգության հանդեպ, որի ծագումնաբանությունն ըստ էության դեռևս հիմնավոր բացատրություն չի ստացել¹¹: Նիկողայոս Ադոնցը գտնում է, որ Դերսիմի հայերի կողմից ղզլբաշներին տրված «դուզիկ» անվանումը նշանակում է աղանդավոր¹²: Սա շատ ուշագրավ մեկնաբանում է, եթե նկատի ունենանք, որ Դերսիմն ու մանավանդ դրա արևմտյան տարածքները 8-9-րդ դարերում եղել են պավլիկյան աղանդավորական շարժման կենտրոններ, մասնավորապես Մանանադին համարվում է այդ շարժման բունը¹³: Շարժման հիմնական զանգվածը կազմում էին հայերը, որոնց մի նշանակալից մասը չդիմանալով հունական ուղղափառ եկեղեցու և կայսրության հալածանքներին, դառնում է իսլամի հետևորդ: Աղանդավորների մի մասն էլ ընդունեց քրիստոնեության ուղղափառ տարբերակն ու դրա պատճառով է, որ Ակնա գավառի հայերն էլ հետագայում հայտնի էին «**հոռոմ**» կամ «**քաղկեդոնական հայեր**» անունով¹⁴: Ջարգացմելով իր միտքը, Ադոնցը ավելացնում է նաև այն, որ տարածաշրջանի հայոց մյուս մասն էլ, քրիստոնյա մնալով հանդերձ, տեղի տվեց իսլամի ազդեցությանն ու յուրացրեց նրա տարրերից շատերը: Այս բոլոր գործընթացների արտահայտություններն էլ դիտարկվում են Դերսիմի մահմեդական քրդերի կենցաղում, պատմամշակութային համալիրներում: Օրինակ, Դերսիմի ղզլբաշների մոտ արգելված էր երկրորդ կին ունենալու հնարավորությունը¹⁵: Ղզլբաշներն, ի տարբերություն քրդերի, երկրագործ են, զբաղվում են այգեգործությամբ, առևտրով ու իրենց բնավորությամբ էլ խաղաղասեր են: Այս հանգամանքներն էլ հնարավորություն են տվել Ադոնցին եզրակացնել, որ «**ոչ մի հիմք չկա այս կիսաքրիստոնեական ժողովրդին վերագրելու քրդական ծագում՝ շատ ավելի մեծ իրավունքով նրանք կարող են համարվել տարածաշրջանի բնիկ քրիստոնյա ազգաբնակչությանը պատկանողներ**»¹⁶: Դերսիմի քրդերի մասին այսպիսի տեսակետ ուներ նաև 16-րդ դ. քուրդ պատմագիր Շարաֆ խան Բիթլիսին (1543–1603): Ըստ պատմիչի՝ այդ աշիրեթների «սովորույթներն ու պահվածքը այնպիսինն էին, որոնք հարիր չէին մուսուլմաններին»¹⁷: Նա շեշտել է, որ «Դերսիմի քրդերի միջավայրում իսլամը որպես այդպիսին չի դավանվում»¹⁸: Դատելով նրա ներկա-

¹¹ *Նիկողայոս Ադոնց*, <http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html>:

¹² *Նիկողայոս Ադոնց*, նույն տեղում:

¹³ Այս մասին տես նաև՝ **Ե. Գ. Տեր-Մինասյան**, Միջնադարյան աղանդների զարգացման և ծագման պատմությունից. Եր., 1968, էջ,1121, **Յովհաննիսյան Ա.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, զիրք առաջին, Եր., 1957, էջ 362-363:

¹⁴ *Նիկողայոս Ադոնց*, <http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html>:

¹⁵ **Հակոբ Մնձուրի**, Երկեր, Եր., 1986, էջ 346 /հետայսու՝ Հակոբ Մնձուրի/:

¹⁶ *Նիկողայոս Ադոնց*, <http://www.armenianhouse.org/adonts/armenian-question-sevr.html>:

¹⁷ Курдские историкографы о курдских племенах. /www.pukmedia.com/russi/index.php?option

¹⁸ Նույն տեղում:

յացրած ու մյուս այլ աղբյուրների վկայություններից, Դերսիմի քրդերի հավատալիքների համակարգում բացակայել են իսլամին վերաբերող հատկանիշները: Այստեղ գործ ունենք մի հանրույթի հետ, որի ակունքներում իրականում էլ պավլիկյան աղանդավորական ուղղության հետևորդ ու հետագայում էլ իսլամացած հայերն են, որոնց մոտ պահպանվել է այն ամենը, ինչն առնչվում է հայոց ավանդական մշակութային համալիրներին: Ասենք նաև, որ դա ոչ միայն բուն Դերսիմում է նկատելի, այլ նաև նրա մերձակա գավառներում, օրինակ՝ Բալույում, որտեղ, ըստ ուսումնասիրողների, ակնհայտ էին մամուլությունները նաև լեռնային մասերում ապրող հայերի ու քրդերի երաժշտական արվեստում: Այդ ոլորտին տեղյակ Ալևորը /Յարություն քահանա Սարգսյան/ գտնում է, որ դա ըստ էության վաղ հայկական երաժշտական արվեստն է, ուստի և անվանել է «քրդահայ երաժշտություն»¹⁹: Ասվածներն, ինչպես տեսնում ենք, հնարավորություն են տալիս նկատել, որ այդ ամենը վերաբերում է նաև գորգագործական մշակույթին:

Ըստ էության հենց այդ ծագումնաբանական մշակութային սերտ աղերսներով էլ պետք է բացատրել Դերսիմի տեղական ծագում ունեցող քրդերի աննախադեպ ջերմ վերաբերմունքը հայերի հանդեպ, որը նկատել են ուսումնասիրողները: Այդ փաստը արձանագրել է 1880-ական թվականներին էրզրումում Ռուսաստանի հյուպատոս Յ. Մալոման, որը ներկայացնելով Դերսիմի հայերին, նաև շեշտում է, որ «ի զարմանս շատ ճանապարհորդների և ուսումնասիրողների՝ Դերսիմի քրդերը նրանց հետ չափազանց բարեկամական հարաբերությունների մեջ էին»²⁰: Յայտնի ճանապարհորդ Լինչն իր հերթին դա բացատրել է նրանով, որ «քրիստոնյաների հետ Դերսիմի քրդերին սերտորեն կապել է թուրքերի հանդեպ եղած ընդհանուր թշնամանքը և քրիստոնեության հանդեպ եղած հարգանքը»²¹: Կարինում Ֆրանսիայի փոխ - հյուպատոս Գրենարի դիտարկումների համաձայն էլ՝ «հնարավոր գտնելով շփումը քրիստոնյաների հետ ու նույնիսկ նրանց վերաբերվելով հատուկ ընդգծվածությամբ, Դերսիմի ղզլբաշները չնչին շփումն իսկ մահմեդականության հետ համարում էին որպես մեծ մեղսագործություն ու պղծվածություն»²²: Դերսիմի հայերի պատմամշակութային համալիրների ուսումնասիրման համար, բացի վերը տրված ժողովրդագրական համառոտ պարզաբանումներից, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև տարածաշրջան կատարված ու տարածաշրջանից կատարված տարբեր էթնիկական միավորումների ներհոսքն ու արտահոսքը: Մասնավորապես՝ Շարաֆ խանի տեղեկություններից պարզվում է, որ Դերսիմի «Չմշկեզեք» կոչված երբեմնի հզոր աշիրեթը հետագայում տրոհվում է, ու նրա որոշ ճյուղեր ընդհանրապես լքում են տարածաշրջանն ու հաստատվում Արարատյան դաշտավայրում, Շիրվանում, Լուրիստանում

¹⁹ *Ալևոր /Յարութիւն քահանա Սարգիսեան*, Բալու, Գահիրե, 1932, էջ 293:

²⁰ *Малома Я. Д.* Описание Эрзерумского вилайета, СПб., 1874. с. 5, 19, *Джалиле Джалил*, Курды Дерсима 50-70 гг. XIX в., http://www.kurdist.ru/index.php?option=com_content&task=view&id=183

²¹ *Линч Х. Ф. Б.* Армения. Т. II. Тифлис, 1910, с. 538, *Джалиле Джалил*, նույն տեղում:

²² Некоторые сведения о турецких курдах-кызылбашах (Из путевых заметок французского вице-консула в г. Эрзеруме г-на Гренара, составил *П. И. Аверьянов*) // Изв. штаба Кавказского военного округа, N 19. с. 47, տես նաև՝ *Джалиле Джалил*, նույն տեղում:

/հյուսիս արևմտյան Իրան/²³: Այսինքն, մենք պետք է նկատի ունենանք, որ այդ ճանապարհով, արդեն 16-17-րդ դարերում Դերսիմի պատմամշակութային համալիրները սկսել էին տարածվել այլ տարածաշրջաններում: Այդ նույն դարերում ու դրանից հետո էլ տեղի են ունեցել նաև դերսիմահայերի արտագաղթեր: Գարեգին Սրվանձտեանցը Ակնա գավառի բնակավայրերի բնութագրման առնչությամբ հիշատակում է, որ «Կամախի շեն և ավերակ գեղերը բազմաթիվ կերևան և կհիշեցնեն մեզ հայոց այն մեծ գաղթականությունը, որոնք այս գավառից փոխադրվեց Թեքիրտաղի, Կելիպոլուի քաղաքները և գյուղերը: ... Ակնա գյուղերից շատերու փոխադրվիլը Նիկոմեդիո կողմերը՝ ուր հաստատվելով՝ իրենց թողած գեղերու անունները իրենց բնակած նոր տեղերուն վրա դրեր են, որպիսիք են Միջագյուղ կամ Օրթագեղ, Բախչաճիկ կամ Պարտիզակ և այլն և միևնույն անունները կան ու կմնան հիներու վրա»²⁴:

Համբարձում Գալստյանն իր ունեցած տեղեկությունների հիման վրա գրում է, որ Չմշկածագի և դրա գավառի բնակիչների մի մասը եկել է Արևելյան Հայաստանից՝ մասնավորապես Սյունիքից²⁵: Ընդհանրապես այս դժվարամատչելի տարածաշրջանը եղել է պարբերաբար կրկնված ջարդերից թաքնվելու վայր ու դա հատկապես լայն ծավալ էր ստացել 19-րդ դ. 90-ական թվականներին ու Մեծ եղեռնի տարիներին, ուստի և Դերսիմի զորագործական մշակույթում պետք է որ այդ ամենը արտահայտվեր որոշակի դրսևորումներով: Այդ ամենի արդյունքում էլ Դերսիմում ձևավորվել են հայոց էթնիկական հատկանիշները ներկայացնող տարբեր շերտեր, որոնք բնականաբար ունեցել են իրենց պատմամշակութային առանձնահատուկ երանգավորումները:

Վերոհիշյալ գործընթացների հետ միասին, Դերսիմի ժողովրդագրական նկարագրի ձևավորման հարցում կարևոր դեր է խաղացել Օսմանյան Թուրքիայի վարած էթնիկական քաղաքականությունը, որի հիմնական նպատակը հայահոծ գավառներում մահմեդականներ բնակեցնելն ու դրանով իսկ՝ հայոց ռազմական ներուժի կողմից սպասվող վտանգի նվազեցնելն էր: Դրան են եղել ուղղված նաև պարբերաբար իրականացված դավանափոխման գործընթացները, որոնց գագաթնակետը դարձան Մեծ եղեռնի իրադարձությունները: 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարի ազգագրական դիտարկումները վկայում են այդ միջոցառումների արդյունք հանդիսացած իսլամ ընդունած կամ քրդացած հայերի հարյուրավոր բնակավայրերի մասին: Ընդ որում, նախկինում դրանց հայկական լինելը վկայում են ոչ միայն մահմեդական բնակավայրերում մնացած հայոց եկեղեցիների ավերակներն ու հնագույն գերեզմանները, այլ նաև քրդացած հայերի կենցաղում և հավատալիքներում պահպանված հայոց բնորոշ ավանդական սովորույթներն ու ծեսերը²⁶: Վերն ասվածը հաստատում են նաև քրդական տասնյակ

²³ Курдские историкографы о курдских племенах. /www.pukmedia.com/russi/index.php?option:

²⁴ **Գ. Սրվանձտյանց**, Երկեր, հ.2., էջ 352, տես նաև **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 58:

²⁵ **Համբարձում Յ. Գասպարեան**, Չմշկածագ և իր գիւղերը, էջ 64:

²⁶ Տես՝ **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 38, 45- 46, 67, 69 - 70, **Յ. Յ. Գասպարյան**, Դերսիմ /պատմաազգագրական ակնարկ/-Պատմա-բանասիրական Հանդես, 1979, 2, էջ 196, 198 և այլն/ հետայսու՝ Յ. Համբարձումյան, Դերսիմ .../:

ցեղերի կողմից հայոց երբեմնի սրբատեղիներում պաշտամունքային արարողությունների իրականացման ու մանավանդ՝ այդ սրբատեղիները թուրքերից պաշտպանելու մասին եղած բազմաթիվ փաստերը²⁷: Անկասկած, դրանք պատահական երևույթներ չեն, դրանք վերացական չեն ու ներկայացնում են այդ ցեղերի գիտակցության մեջ պահպանված նախնական ու ազգային այն հատկանիշները, որոնք վերաբերում են իրենց նախնիներին ու նրանց մշակութային ավանդույթներին: Դերսիմի հայերի դավանափոխման ծավալների մասին սպառնիչ պատկերացում է տալիս Գ. Չալաջյանի կողմից 1910-ական թթ. Դերսիմի 384 գյուղերի վերաբերյալ ներկայացրած պատմամշակութային ու ժողովրդագրական համառոտ նկարագիրը: Ըստ այդմ՝ դրանցից 37-ը հայաբնակ էին, 210-ը՝ քրդաբնակ, 137-ը՝ հայ և քուրդ խառն բնակչությամբ: Սակայն կարևոր է այն պարագան, որ այդ բոլոր բնակավայրերում էլ պահպանվել էին հայոց եկեղեցիներ կամ դրանց ավերակներ, խաչքարեր ու պատմական այլ հուշարձաններ, իսկ քրդերի գիտակցության մեջ էլ դեռևս պահպանվել էր իրենց հայկական արմատներ ունենալու ավանդույթը²⁸:

Դերսիմի հայերի ինքնության բացահայտման հարցերով զբաղվող դերսիմցի Միհրան Գյուլթեկիի կատարած դիտարկումների համաձայն՝ ժամանակակից Դերսիմի բնակչության մոտ 75%-ը կազմում են ծագումով հայերը, որոնք թեև իսլամացած են ու առօրյա կյանքում բնականաբար թաքցնում են իրենց հայ լինելը, սակայն տանն ու իրենց ներքին հարաբերություններում պահպանում են հայկական ավանդույթները²⁹: Անկասկած է, որ դա բազմադարյա ժողովրդագրական գործընթացների արդյունքն է, և դա վկայում են Գյուլթեկիից ավելի վաղ ժամանակներին վերաբերող դիտարկումները: Մասնավորապես, Դերսիմի կենտրոնական մասում գտնվող Խուր և Տուժիկ գավառներում ապրած քրդական ցեղերի մասին 1890-ական թվականներին նույն նկարագիրն էր տվել Անդրանիկը: Նա տեղի կուրեյշիտ քուրդ ցեղի հոգևոր առաջնորդի մոտ տեսել էր հայերեն ձեռագրեր, այդ թվում նաև ավետարան ու այդ ամենի և իր ընդհանուր դիտարկումների արդյունքում նկատել է, որ «տերսիմցիներուն եթե ոչ բոլորը, զեթ մեծ մասն այն համոզմունքին են, որ իրենց նախահայրերը հայեր են: Դա ապացույցներով պնդում են հենց քուրդ հոգևոր առաջնորդները՝ սեիդները»³⁰: Անշուշտ, հիմնականում դրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ Դերսիմի քրդական մի քանի ցեղեր, մասնավորապես Չայդարանցիք, Մամըզոնցիք, Տեր Օվանցիք, Ապասանցիք, Կուրեյշանցիք և ուրիշները, որոնց միստուկացին մոտիկից ծանոթ եղած ուսումնասիրողները համարում են «քրդացած, բայց կես հայ քրիստոնյա մնացած» ցեղեր, մինչև վերջ բարեկամ մնացին հայերին ու պաշտպանեցին նրանց սրբատեղիները³¹: Անդրանիկն իր հերթին հաղորդում է, որ դրանք «կիսանկախ, մոտ 100 հազար ղզլբաշ քրդեր են, որոնք բաժանված են 18 ցեղերի ու

²⁷ <http://www.firatnews.com/index.php?rupel>

²⁸ Գ. Չալաջյան, նշվ. աշխ., էջ 31-100:

²⁹ <http://www.panorama.am/en/politics/2011/02/07/m-gyulteqil/>:

³⁰ Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 161-162:

³¹ Գ. Երևանյան, Պատմութիւն Չարսանջակի հայոց, Բեյրութ, 1956, էջ 65 /հետայսու՝ Գ. Երևանյան/:

դրանց թվումն են նաև Միրաքցիք, Մամրզցիք և այլն»³²: Այս 18 ցեղերի մասին հաղորդում է նաև Հակոբ Մնձուրին՝ շեշտելով, սակայն, դրանց բոլորի զագայախոս լինելու հանգամանքը³³: Նա նաև պատմում է Մնձուր լեռնագագաթի շրջակայքում ապրած Բախտիարի քրդական աշիրեթի հայոց հանդեպ ունեցած որոշ բարեհաճության մասին, որոնք Ալնա ու Ղուրուչայի հայկական գյուղերի թալանի ու կոտորածների ալիքների ընթացքում բավարարվել են հայկական մի քանի գյուղերից ստացված տարատեսակ ընծաներով ու դրա փոխարեն նրանց պաշտպանել ջարդարարներից³⁴:

Սակայն Դերսիմի ժողովրդագրության ու, մասնավորապես, գորգագործական ավանդույթների ուսումնասիրման առումով հատկապես կարևոր են արդեն հիշատակված Միրաքյան ու Մամրզյան քրդացած հայերին վերաբերող տեղեկությունները:

Գ. Հալաջյանն իր հավաքած տեղեկություններից ելնելով, նշում է, որ Միրաքյանները քրդացել են 1604-1606 թվականներին³⁵: Միրաքյանների կենտրոնատեղին համարվել էր Հալվորի գյուղը, որը մեր ժամանակների գրականության մեջ էլ հիշատակվում է Հալվորի վանք անունով: Հայտնի է, որ այս վանքի քահանայությունը ժառանգաբար պատկանում էր Միրաքյաններին: Այս վանքը մեծ ճանաչում ու հարգանք ուներ հայերի ու զագաների շրջանում, ընդ որում, հատկանշական էր այն, որ զագա սեփղներն ու շեյխերը քահանայի ներկայությամբ, առանց նրանից արտոնություն ստանալու, իրավունք չունեին նստել³⁶: Դերսիմի ու մերձակա տարածաշրջանների քրդական բազմաթիվ ցեղեր, այդ թվում նաև Միրաքյանները, իրենց ծագումնաբանությունը կապել են Մամիկոնյան նախարարական տան հետ ու իրենց համարել են այդ տոհմի շառավիղներ³⁷: Միրաքյանների մասին հիշատակվում են նաև ժամանակակից քրդական ու թուրքական հրատարակություններում, ուր մասնավորապես շեշտվում է 1920-ականներից սկսված քրդական ազատագրական պայքարում նրանց մասնակցությունը, հայկական տեղանունների, հայոց սրբավայրերի նկատմամբ քրդերի պաշտամունքի պահպանվելն ու մանավանդ՝ Դերսիմում Միրաքյան իշխանական տոհմի գոյությունը: Քուրդ պատմաբան Նուրի Դերսիմին Դերսիմին նվիրված իր ուսումնասիրություններում այդ տոհմը հիշատակում է «**Միրոսան**» անունով: Ինտերնետային կայքերից մեկում այդ առնչությամբ շեշտված է, որ դրանք հենց միրաքյաններն են, որոնց զագայերեն կոչում են «Միրոսան», այսինքն՝ միրոյենք, միրաքյանենք, որոնք իրենց թվական կազմով ու զինական ուժով դասվել էին Դերսիմի առավել հզոր ցեղախմբերի շարքը³⁸: Նուրի Դերսիմին նույնպես այս տոհմի ծա-

³² **Անդրանիկ**, նշվ. աշխ. էջ 156:

³³ **Հակոբ Մնձուրի**, էջ 494:

³⁴ **Հակոբ Մնձուրի**, , էջ 253- 254, այս աշիրեթի՝ Պախթիարան աշիրեթի հակաթուրքական ուղղվածությունը նկատել է նաև Գ. Հալաջյանը (տես նշվ. աշխ., էջ 87):

³⁵ **Գ. Հալաջյան**, նշվ. աշխ., էջ 68:

³⁶ <http://www.dnforum.am/showthread.php>:

³⁷ **Վահագն Գարագաշեան** [http://akunq.net/am/?p=9644 /](http://akunq.net/am/?p=9644/):

³⁸ <http://www.dnforum.am/showthread.php>

գումը կապում է Մամիկոնյան նախարարական տան հետ, իսկ «Միրաքյան» անվանման առաջացումն էլ բացատրում է նրանով, որ դրանց նահապետ Տեր-Օվանը քրդական ցեղերի շրջանում հայտնի է եղել որպես իշխան՝ միր կամ միրո, ուստի և տոհմն էլ անվանակոչվել է Միրոենք, որն էլ հետագայում ստացել է Միրաք ու Միրաքյան տեսքը: Նա իր դիտարկումների ընթացքում պարզել է, որ Միրաքյանները զբաղվել են հիմնականում անասնապահությամբ, միրաքցի կանայք էլ զբաղվել են տնային զբաղմունքներով, այդ թվում՝ գործել են գորգեր ու կարպետներ³⁹: Նուրիմ տեղեկացնում է ևս մի կարևոր հանգամանքի մասին՝ Դերսիմի քրդերը հարս էին տանում միայն հայերից:

Մամիկոնյանների շառավիղներից են նաև Մամըզան, Մամաքանլի, Մամըբի-ե, Մամըբոն քուրդ ու զղլբաշ ցեղերը⁴⁰: Անգլիացի ճանապարհորդ ու դիվանագետ Սարկ Սայքսը քրդական մի շարք ցեղերի հայկական ծագում ունենալու, մասնավորապես Մամիկոնյաններից սերվելու առումով, նշել է նաև Բյուրակնի լեռների Մամաքանլի ու Վանա լճի հյուսիսային ափերին բնակված Մամական ցեղերը⁴¹: Անշուշտ, այս տեսակետներն առաջին հերթին հիմնավորվում են հենց այդ աշիրեթների մեջ պահպանված ավանդույթներով, ու, բացի այդ էլ, հայտնի է, որ արաբական հետապնդումներից խուսափելու նպատակով Մամիկոնյան ռազմատենչ ու ազատամիտ նախարարական տան ճյուղերն անցել են լեռնային անմատչելի շրջաններ, որոնց թվումն էին նաև խնդրո առարկա Դերսիմի գավառները⁴²:

Ամփոփելով Դերսիմի ժողովրդագրությանը վերաբերող այս համառոտ ակնարկը, մեր համար անտարակույս է, որ Դերսիմի հայ ու քուրդ բնակչության մշակութային համալիրներում բացահայտորեն գերակա էին հայոց ավանդույթներն ու նաև այն, որ Դերսիմի քրդերի տեղաբնիկ ցեղերի ծագումնաբանության հարցը պետք է կապել տարածաշրջանում բնակված հայերի պարբերաբար կայացած քրդացման գործընթացների հետ: Փաստորեն տարածաշրջանը եղել է հայոց ու հայ մշակույթի մի կարևորագույն պահոց, ուր ըստ էության պահպանվել են, ընդ որում՝ նաև քրդերի միջավայրում, ուսումնասիրման ու մեկնաբանման կարոտ հայոց ավանդական մշակութային համալիրների վաղ տարբերակներ: Ասվածն անշուշտ չի նշանակում, թե մենք չենք ընդունում գորգագործությանը քուրդ ցեղերի կողմից զբաղվելու փաստը, ուղղակի նկատի ունենալով քրդական գորգագործական կենտրոններին բնորոշ տեխնոլոգիաները, գույներն ու հորինվածքների մատուցման առանձնահատկությունները, որոնք էլ հնարավորություն են տալիս մեզ քրդական համարվողներից առանձնացնել հայոց կողմից ստեղծված գորգերը:

³⁹ <http://www.dnforum.am/showthread.php>: Միրաքյաններին «միրո» անվանելու մասին տես նաև **Գ. Հալաքյան**, նշվ. աշխ., էջ 62:

⁴⁰ **Վահագն Գարագաշեան** [http://akunq.net/am/?p=9644 /](http://akunq.net/am/?p=9644/):

⁴¹ Այս մասին տես՝ **Վահագն Գարագաշեան** [http://akunq.net/am/?p=9644 /](http://akunq.net/am/?p=9644/):

⁴² Այդ տարածքներում Մամիկոնյանների առկայության մասին տես՝ **Է. Դանիելյան**, Տարոնի և Սասունի Մամիկոնյաններ-Թռռնիկյանները /11-12-րդ դդ./.-Պատմա-բանասիրական Հանդես, 1979, թիվ 2, էջ 142:

**О ПРОБЛЕМАХ ИЗУЧЕНИЯ КУЛЬТУРЫ АРМЯНСКОГО КОВРОТКАЧЕСТВА ДЕРСИМА
И ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ РЕГИОНА**

А. А. Погосян

Этнографические материалы конца 19-ого и начала 20-ого вв. показывают, что среди армян и курдов Дерсима было развито ковроткачество. При выявлении местных особенностей ковроткачества армян, нами уделено особое внимание к вопросу происхождения курдов Дерсима. В частности, это касается племенных групп «заза» и «кзылбаш», у которых широко присутствуют религиозные и культурные традиции, присущие армянам. Нами учтен и фактор скрытых армян, которые живут как в Дерсима, так и в других регионах современной Турции. Имея в виду эти особенности, мы сочли возможным, при изучении ковроткачества армян и выявления характерных им типов ковров, среди прочих первоисточников, использовать также материалы местного курдского ковроткачества, в частности, племенных групп «заза» и «кзылбаш».

**ABOUT THE PROBLEMS OF THE STUDY OF ARMENIAN RUG-WEAVING CULTURE
OF DERSIM AND THE PECULIARITIES OF THE ETHNOGRAPHICAL OBSERVATION
OF THE AREA**

A. A. Poghosyan

Ethnographical observations among Dersim Armenians and Kurds referring to the end of the 19-th and beginning of the 20-th century, witness, that rug-weaving was rather developed there. In revealing the local peculiarities of Armenian rug-weaving culture, Dersim Kurds geneological elucidation is of pivotal meaning. Among the Dersim Kurds are the so called “zaza”, and “kzlbash” ethnic groups, who in religious and cultural meaning bear the influence of Armenians typical traditions. Besides, “hidden” Armenians also make a substantial group. Taking into consideration all these, observing Dersim Armenians rug-weaving culture, as a source we have also included local Kurds, particularly, rug-weaving traditions typical to zazas and kzlbashes.

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Տ. Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Չայոց գորգագործական մշակույթի պատմությունը թեև ընդհանուր առմամբ ուսումնասիրված է, սակայն գորգագործական կենտրոնների մեծ մասի վերաբերյալ մեր ունեցած պատկերացումները ընդհանրական են ու հստակեցված չեն: Մասնավորապես, բացահայտված չեն դրանց բնորոշ գորգերի տիպերն ու մանավանդ դրանց ծագումնաբանությունը: Այս առումով առանձնանում է նաև Սևանի ավազանը, որը լինելով գորգագործական ավանդույթներով հարուստ տարածաշրջան, այդուհանդերձ, սկզբնաղբյուրների բացակայությունն ու դաշ-